

Հաւատարմութեամբ կը շարունակենք մեր առաքելութիւնը: Անգամ մը եւս կու գամք մեր երախտագիտութիւնը յայտնելու ՀԱՆԴԵՍԻ աշխատակիցներուն, որոնց նուիրածութիւնը կը պարտաւորեցնէ մեզ աւելի գիտակցութեամբ փարելու այս աշխատանքին: Շնորհակալութիւն մաւր հայրենիքի եւ սփիւռքի մամուլին, որ լայնօրէն անդրադարձաւ ցարդ իրականացած գործին, մղելով մեզ սուսանել բծախնդիր վերաբերմունքի:

Մենք կը պահենք մեր խոստումը: ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ էջերը բաց կը մնան բոլոր ամօնց, որոնք գիտեն գիտական հիմքերու վրայ նետուած եւ առարկայօրէն ներկայացուած խօսքին արժէքը:

Բացատրութիւն մը: ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ լոյս կը տեսնէ տարին մէկ անգամ: Ներկայ հատորը կը հանդիսանայ երրորդը այս շարքին: Կանխելու համար շփոթութիւնները, 1970 եւ 1971 թուականներուն հրատարակուած համարները յաջորդաբար ընդունելով որպէս Ա. եւ Բ. հատորներ, այս մէկը կը մականգրենք Գ. հատոր: